Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջն դպրոց

Առարկա՝ Շախմատ

Թեմա՝ Խաղի դերը կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում

Վերապատրաստող, մենթոր՝ Նունե Ասրյան

Ուսուցիչ՝ Դավթյան Նարե

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……
…3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները որպես միջանձնային հարաբերությունների ձևավորման վրա ազդող գործոն
……..…4

1.2 Տարրական դպրոցի ուսումնական գործընթացում իրականացվող խաղերի տեսակների բնութագիրը.....5

1.3 Շախմատի ազդեցությունը տարրական դասարանի աշակերտների զարգացման
գործընթացում……
……9

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Փորձարարական աշխատանքի իրականացման ընթացքը, արդյունքների վերլուծությունն ու
ամփոփումը……..14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….
21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…….....…..22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջանձնային հարաբերությունների հիմնախնդիրը մշտապես եղել է մի շարք գիտությունների՝ փիլիսոփայության, մանկավարժության, սոցիոլոգիայի, անձի հոգեբանության ուսումնասիրության կենտրոնում:

Միջանձնային հարաբերությունները սովորողների միջև ձևավորվում են փոխհարաբերությունների, համատեղ գործունեության, հոգեբանական կապերի, շփման, տեղեկատվության փոխանցման ընթացքում, որը էական նշանակություն ունի անձի ձևավորման, զարգացման և սոցիալականացման գործընթացում: Աներկբա է, որ տարրական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում դրվում է կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման, հոգեկան գործընթացների հիմքերը, որին նպաստում են բազմաբնույթ խաղերը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդի ժամանակաշրջանում անհրաժեշտ է ստեղծել կրթական այնպիսի բարեհարմար միջավայր, որը կնպաստի սովորողների անձի ընդհանուր զարգացմանն ու ինքնազարգացմանը, հաղորդակցական կարողությունների և միջանձնային հարաբերությունների ձևավորմանը: Այս համատեքստում տեղին է հնչում այն հարցադրումը՝ արդյոք տեղեկատվական-տեխնոլոգիաների զարգացման պայմաններում ժամանակակից մարդուն անհրաժետ են միջանձնային շփումներ, ընկերական հարաբերություններ, որի պատասխանը ակնառու է. անձի միջանձնային հարաբերությունները առաջնային են բոլոր ժամանակներում, և այս հանգամանքով էլ պայմանավորված է սույն թեմայի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակը կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում խաղի դերի և նշանակության ուսումնասիրությունն ու վերլուծությունն է:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

1. Ուսումնասիրել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների միջանձնային հարաբերությունները:

2. Վերլուծել տարրական դպրոցում կիրառվող խաղերի տեսակները:

3. Առաջարկել կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորմանը նպաստող խաղեր:

Հետազոտական աշխատանքի իրականացման համար կատարվել են թեմայի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:

Հետազոտության մեթոդները՝

- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցաթերթիկ,
- արդյունքների վիճակագրական և մաթեմատիկական վերլուծություն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները որպես միջանձնային հարաբերությունների ձևավորման վրա ազդող գործոն

Մարդը և նրա առանձնահատկությունները, ինչպես կենդանի բնության երևույթները, հասու են ուսումնասիրության, ճանաչելի են դառնում՝ շրջակա միջավայրի հետ ունեցած իր հարաբերություններում :

Այդ հարաբերություններից մեկն էլ միջանձնային հարաբերություններն են, որը ուսումնասիրվել է մի շարք գիտությունների՝ մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, բժշկության կողմից:

Միջանձնային հարաբերությունները կարելի է սահմանել, որպես՝ մարդկանց միմյանց նկատմամբ առկա սուբյեկտիվ վերաբերմունքի իրացում:

Միջանձնային հարաբերությունները երկու կամ ավելի հարաբերվող մարդկանց միջև զգացողությունների և դիրքորոշումների արտահայտման ձև է: Մեկ այլ բնորոշմամբ միջանձնային հարաբերությունները առաջանում են սոցիալական խմբի անդամների փոխադարձ ընկալման ու հաղորդակցության արդյունքում: Երբեմն «միջանձնային հարաբերությունների» փոխարեն կիրառվում է, փոխհարաբերություններ եզրույթը, որն առաջարկել է Յ.Լ.Կոլոմինսկին: Ըստ նրա միջանձնային հարաբերությունները կարող են դրսևորվել մարդկանց փոխհարաբերություններում ագրեսիայի, թշնամության, ատելության, կոնֆլիկտի, սիրո, հարգանքի, մտերմության, վերահսկման և այլ ձևերով:

Երեխային կրթելու և դաստիարակելու համար հարկավոր է իմանալ նրա տարիքային առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է 6-10 տարեկանը: Այն համընկնում է տարրական դպրոցի 1-4-րդ դասարանների հետ: Կրտսեր դպրոցական տարիքը աչքի է ընկնում զարգացման ճգնաժամային փուլերով, որոնք արտահայտված են նորագոյացություններով:

Կրտսեր դպրոցականի սովորողների մտածողությունը ակնառու պատկերավոր է, նրանք հենվում են կոնկրետ առարկաների, երևույթների ակնառու հատկությունների և որակների վրա: Ուսուցման գործընթացում տարբեր առարկաների դասաժամերին, աշակերտների ուսումնական գործունեության արդյունքում ընդլայնվում է նրանց միջև շփման շրջանակները, ձևավորվում է միջանձնային հարաբերություններ, ուսումը դառնում է հետաքրքիր, զարգանում է ինքնակարգավորումը, ձևավորվում է ինքնագնահատականը: Կրտսեր դպրոցական տարիքում երեխան արդեն հոգեբանորեն պատրաստ է ուսումնական գործունեության, որի ընթացքում աչքի են ընկնում ընկալման սրությամբ:

Հիշողությունը մեխանիկական է, երեխաները ոչ կամային կերպով մտապահում են ուսումնական այն նյութը, որը նրանց մոտ հետաքրքրություն է առաջացնում, ներկայացվում է խաղով և մատուցվում է վառ, ակնառու պատկերներով: Կրտսեր դպրոցականները օժտված են մեխանիկական հիշողությամբ, նրանք կարողանում են նյութը անգիր սովորել, առանց խորանալու բովանդակության մեջ:

1.2 Տարրական դպրոցի ուսումնական գորընթացում իրականացվող խաղերի տեսակների բնութագիրը

Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և դրա կարևորությունը շեշտադրել են Յա. Ա. Կոմենսկին, Ժ.Ժ. Ռուսոն, Կ. Ուշինսկին, Յա. Կորչակը, Հ.Թումանյանը, Ղ.Աղայանը, Խ.Աբովյանը, Ջ.Գյուլամիրյանը և շատ այլք: Խաղի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ և մանկավարժներ: Մարդու կյանքի յուրաքանչյուր փուլ ունի իր առանձնահատկությունները և առաջատար գործունեությունը: Կյանքի առաջին տարիներին երեխայի մեջ տեղի են ունենում ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև մտավոր բնույթի կարևոր փոփոխություններ: Նա ձգտում է ինքնուրույնության, ներաշխարհում կատարվում են հոգեբանական բարդ երևույթներ, որոնք բացահայտվում են տարբեր խաղերի ընթացքում: Յուրաքանչյուր խաղային հարաբերություն վերարտադրում է իրականության մեջ գոյություն ունեցող սոցիալական այնպիսի փոխհարաբերություններ, որոնց շնորհիվ լայն հնարավորություն է ստեղծվում երեխայի դաստիարակության համար: Երեխան

ընդհանուր ընդօրինակումից անցնում է սոցիալական ազդեցությունների ընտրողական յուրացման, որի արդյունքում որակապես փոխվում է կապը հասարակության հետ: Մեծահասակի նպատակաուղղված ներգործությունների շնորհիվ երեխան խաղի միջոցով յուրացնում է սոցիալական փորձ, բարոյական որակներ՝ ընկերասիրություն, մարդասիրություն, բարություն, ազնվություն, հայրենասիրություն: Խաղի դաստիարակչական նշանակության և հայեցի դաստիարակության հիմնահարցը կարևորվել է նաև բազմաթիվ հայ գրողների, մանկավարժների, հոգեբանների, մտածողների կողմից: Հայ մեծ լուսավորիչ, գրող, մանկավարժ Խաչատուր Աբովյանը մշտապես ընդգծում էր խաղի դաստիարակչական նշանակությունը՝ համոզված, որ երեխան կյանքի և բնության վերաբերյալ առաջին և հավաստի տեղեկությունները ստանում է խաղի միջոցով: Խ. Աբովյանն առանձնահատուկ նշանակություն էր տալիս երեխայի խաղի բնականության կողմին և անփոխարինելի գեղագիտական նշանակությանը:

Մ. Պ Օսիպովան առաջարկել է խաղերի հետևյալ խմբավորումը՝ դիդակտիկ խաղեր, իմացական խաղեր, շարժողական խաղեր, ճանաչողական խաղեր, սյուժետադերային խաղեր, խաղ-բեմականացում և ազգային խաղեր:

Դիդակտիկ խաղերը ունեն հստակ կառուցվածք, բովանդակություն, խաղային գործողություններ և կանոններ: Դիդակտիկ խաղերի իրականացման ընթացքում կարևոր է, թե ուսուցիչը ինչպես է պատրաստվել խաղին, ինչպիսին է աշակերտների գիտելիքների մակարդակը:

Իմացական խաղերը ուղղված են աշակերտների խոսքի զարգացմանը, երևակայությանը, հիշողությանը: Տեքստային խնդիրները, հանելուկները, շուտասելուկները իմացական տարրերի կարևոր բաղադրիչ են համարվում:

Շարժողական խաղերը կատարում են դաստիարակչական և զարգացնող դեր: Ձևավորում են երեխաների բարոյակամային որակներ, որովհետև երեխաները հաղթահարում են դժվարությունները, ոգևորվում են, հաղթում և պարտվում: Շարժողական խաղերի նպատակը երեխաների հանգիստը կազմակերպելն է: Նպատակահարմար է անցկացնել ֆիզկուլտ-դադարները: Շարժողական խաղերի միջոցով, երբ աշակերտները հաղթահարում են առաջացած դժվարությունները, ոգևորվում, դառնում են պատասխանատու, կարգապահ:

Ճանաչողական խաղերի միջոցով երեխաները ընդլայնում են իրենց գիտելիքները, տեղեկություններ են ստանում, կարդում են պատմվածքներ, հեքիաթներ: Ճանաչողական խաղերը կարող են լինել՝ խաղ-մրցություն, խաղ-դատավարություն և այլն:

Սյուժետադերային խաղերը զարգացնում են երեխաների մտածողությունը, երևակակությունը, հստակեցնում են վերաբերմունքը կյանքի, մարդկանց, բնության հանդեպ, ձևավորում են միջանձնային հարաբերությունները, նոր

տպավորություններ են ստեղծում: Սյուժետադերային խաղերի հիմքում ընկած է սովորողների նախասիրությունները, դրդապատճառները, պահանջմունքները: Սյուժետադերային խաղերի կանոնները, ընթացքը որոշում են աշակերտները՝ ելնելով իրենց կենսափորձից, նախասիրություններից:

Խաղ-բեմականացման ժամանակ կիրառվում է առակի, պատմվածքի, հեքիաթի կամ որևէ իրական պատմության սյուժե, որտեղ երեխաները իրենց պատկերացնում են այդ դերում: Այն ունի ուսուցողական, դաստիարակչական և զարգացնող նշանակություն: Խաղ-բեմականացման ժամանակ պետք է նախօրոք զբաղվել ձևավորմամբ, հագուստների պատրաստմամբ և այլն:

Ազգային խաղերը ներառում են խաղի մյուս տարատեսակների բնութագրիչ գծերը: Սզգային խաղերի միջոցով երեխան շատ հեշտությամբ յուրացնում է մայրենի լեզուն, ազգային սովորույթները, պատմությունը, ավանդույթները, արժեքները:

Դերային խաղը երեխայի համար սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները: Դերախաղի էական նշանակությունը այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դերում և կարծես աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, դերային խաղերի միջոցով: Երեխան հավատում է իր հորինած կերպարին: Նա ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Դերախաղը հիմնականում խմբային է, մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Դերային խաղն ավելի մոտ է իրականությանը, ուշադրություն է դարձվում մանրամասներին, ժամանակին և տարածությանը: Դերաբաժանումը կարևոր սոցիալական նշանակություն ունի: Խաղի հաջող անցկացումը մեծ մասամբ կապված է դերերի ճիշտ բաշխումից, այդ իսկ պատճառով կարևոր է հաշվի առնել երեխաների բնավորությունը, խառնվածքը և ընդունակությունները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ չնայած ամաչկոտ կամ ոչ աշխույժ երեխաները միշտ չէ, որ կարող են գլխավոր և պատասխանատու դերերը ստանձնել, սակայն, երեխան պետք է փորձի հանդես գալ տարբեր դերերով: Կարևոր է խաղի մեջ կատարել ճիշտ դերաբաշխում: Հատկապես կարևոր են բանավոր խաղերը՝ հանելուկները, բառախաղերը, վանկախաղերը, որոնք զարգացնում են տրամաբանությունը, խոսքը, ճանաչողությունը: Խաղերը նպաստում են երեխայի բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, էկոլոգիական, աշխատանքային դաստիարակությունը և արժեհամակարգի ձևավորմանը:

Նկար 1.



Մանկավարժական խաղն ունի հստակ նպատակ կանխատեսվող մանկավարժական արդյունք.

• ավանդական ուսուցման գործընթացի ժամանակ գիտելիքի հիմնական աղբյուր հանդիսանում է ուսուցիչը, իսկ խաղի ժամանակ գիտելիքի որոշակի աղբյուր չկա,

• ուսումնական գործընթացն իրականացվում է մենախոսության (ուսուցիչը բացատրում է, սովորողը լսում), կամ երկխոսության (սովորողը հարցեր է ուղղում, ուսուցիչը պատասխանում է, կամ ստուգման նպատակով ուսուցիչն է հարցեր ուղղում սովորողներին) միջոցով, իսկ խաղն իրականացվում է գործողությունների լեզվով, և խաղի մասնակիցները ակտիվ հաղորդակցման միջոցով սովորում և սովորեցնում են իրար,

• խաղը պարտադրված չէ. Այն հիմնականում ինքնակամ է և ցանկալի,

Խաղի ժամանակ, մասնակիցը ազատ է ու անկաշկանդ, քանի որ նա հանդես է գալիս որպես դերակատար և չի ճնշվում սեփական «Ես»-ը արտահայտելու մտքից:

Սակայն նպատակահարմար չէ ողջ ուսումնական գործընթացը չի կարելի իրականացնել խաղով: Երեխան պետք է հասկանա այդ խաղի կիրառությունը դասի ընթացքում:

Խաղը երեխայի ներքին աշխարհը բերում է համապատասխանության իր ունեցած պատկերացումներին և բացում է հնարավորություններ այն բանի համար, որ երեխան ընդլայնի իր փոխհարաբերությունները ընկերների հետ և զարգացնի արդեն ձեռք բերած ընդունակությունները: Խաղը զարգացնում է երեխայի այնպիսի որակներ, ինչպիսիք են համագործակցությունը, միջանձնային հարաբերությունները, նախաձեռնողականությունը, իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ համաձայնեցնելու ընդունակությունը: Խաղերի միջոցով երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները, լուծել ներքին հակասությունները, բարձրացնում են ինքնագնահատականը: Ուսուցման գործընթացում ոչ միայն խաղը՝ այլև կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունները պայմաններ են ստեղծում ուսուցման հասարակական-դաստիարակչական նպատակների իրականացման համար: Երեխաները սովորում են լինել պատասխանատու, ընկերասեր, օգնող, որի արդյունքում ձեռք են բերում հասարակության մեջ կյանքի համար անհրաժեշտ հմտություններ:

1.3 Շախմատի ազդեցությունը տարրական դասարանի աշակերտների զարգացման գործընթացում

Շախմատը բարելավում է երեխաների ճանաչողությունը:Անհամար ուսումնասիրություններ են կատարվել այն մասին, թե շախմատ խաղալն ինչ ազդեցություն ունի երեխաների զարգացման վրա: Արդյունքե՞ր: 10-ամյա մի խումբ երեխաների մասնակցությամբ ուսումնասիրությունների ընթացքում, ովքեր ստացել են շախմատի մանրամասն ուսուցում, գիտնականները եզրակացրել են, որ երեխաները սկսել են ավելի լավ խաղալ:

Շախմատը բարելավում է խոսքի հմտությունները:Այո, խոսքային հմտությունները: Բժիշկ Ալբերտ Ֆրանկը ուսումնասիրել է երեխաներին, ովքեր շախմատ էին խաղում շաբաթական երկու ժամ: Արդյունքում, նա եզրակացրեց, որ խաղը, որը հիմնականում անկախ է լեզվից, կարող է բարելավել խոսքային հմտությունները, քանի որ այն ներգրավում է ուղեղի տարածքները, որոնք կապված են լեզվի հետ, ներառյալ տրամաբանության համար պատասխանատուները:

Շախմատը զարգացնում է քննադատական մտածողության հմտությունները:Թվում է, թե գրեթե ակնհայտ է, բայց դոկտոր Ռոբերտ Ֆերգյուսոնի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 7-ից 9-րդ դասարանների աշակերտները, ովքեր սկսել են շախմատ խաղալ, 17%-ով ավելի լավ են գնահատում առողջ դատողությունը և քննադատական մտածողությունը: % համեմատած այն հասակակիցների հետ, ովքեր շախմատ չեն խաղում: .

Շախմատը քեզ պահում է մտավոր:Այնպես, որ? Արդյո՞ք շախմատի բոլոր առավելությունները նախատեսված են զարգացող ուղեղ ունեցող երեխաների համար: Հաճույքով! Ապացուցված է, որ շախմատը պահպանում է տարեց խաղացողների մտավոր կարողությունները և օգնում է կանխել այնպիսի հիվանդությունների ախտանիշների զարգացումը, ինչպիսիք են տկարամտությունը և Ալցհեյմերը:

Շախմատը բարելավում է էմոցիոնալ վիճակը:Շատերը կարծում են, որ շախմատը սառը հաշվարկի խաղ է, սակայն կարևոր է հասկանալ, որ խաղը ներհատուկ կերպով նախատեսված է երկու խաղացողների համար, ինչն իր հերթին բարելավում է էմոցիոնալ վիճակը, ինչպես նաև զարգացնում է հոգեսոցիալական փոխազդեցությունը: Ռոուզ Մարի Շտաթս Ազատ շախմատի ակադեմիայից:

Շախմատը բարելավում է մաթեմատիկական հմտությունները:Մաթեմատիկան հաճախ ընկալվում է որպես գիտություն, որն ընդունակ է լուծել միայն վերացական խնդիրներ, և ոչ ավելին: Բայց դա այդպես չէ: Մաթեմատիկան օրինաչափությունների ճանաչման, տրամաբանության և ձեր գլխում գտնվող փոփոխականի հետ խաղալու կարողության մասին է, որոնք հայտնի են շախմատը բարելավելու համար:

Շախմատը սովորեցնում է տրամաբանություն և արդյունավետություն:Շախմատը սովորեցնում է տրամաբանություն, քանի որ դուք սահմանափակված եք խաղատախտակով և խաղաքարերով, և դուք պետք է արդյունավետ լինեք, քանի որ խաղում եք հակառակորդի դեմ, ով ունի նույն նպատակը: Այն նպաստում է ընթացիկ խնդիրների լուծումների որոնմանը և բարդ խնդիրների լուծման մեթոդների կիրառմանը:

Շախմատային խնդիրները մղում են ետ մնալուն և սովորեցնում են նպատակ դնել Անհաջողակները հաճախ կորցնում են մոտիվացիան մարտահրավերների բացակայության պատճառով, իսկ շախմատը անվերջ մարտահրավերների և պարգևների խաղ է: Ի վերջո, նույնիսկ մեծագույն շախմատի գրոսմայստերները միշտ կունենան հակառակորդներ, ովքեր կարող են մարտահրավեր նետել նրանց, և նույնիսկ եթե նա բոլոր մարդկանցից լավագույնն է, միշտ կա սուպերհամակարգիչ: Շախմատն աշխարհի ամենահայտնի

տրամաբանական խաղերից մեկն է: Գաղտնիք չէ, որ նրանք զարգացնում են ինտելեկտուալ անհատականության տրամաբանությունը, մարտավարությունը, ռազմավարությունը և շատ այլ հատկություններ:

Ինտուիցիա

Ընտրելու ունակությունը մեզանից ամեն օր է պահանջվում: Առավոտից երեկո մենք անընդհատ բախվում ենք փոքր ու աննշան, ինչպես նաև մեծ ու չափազանց կարևոր իրավիճակների, երբ պետք է կոնկրետ ընտրություն կատարել:Շախմատը զարգացնում է ինտուիցիան, քանի որ նույն ուժի երկու շարժումներից պետք է ընտրել միայն մեկը: Հետաքրքիր փաստ. շախմատում խաղացողների ոչ թե 90%-ն է օգտագործում ամենաակնհայտ քայլը, այլ միայն 50%-ը:

Համբերություն

Եթե համբերություն չունեք, դժվար թե կարողանաք հաղթել հակառակորդին: Խաղատախտակի վրա ուժերի դասավորվածության մանրակրկիտ վերլուծություն, հակառակորդի քայլին համբերատար սպասելը և ռազմավարության վրա երկարաժամկետ կենտրոնացումը՝ այս ամենը շախմատիստի մոտ համբերություն է զարգացնում: Եվ սա հաջողակ մարդու հիմնական հատկանիշներից մեկն է :

Վերլուծական մտածողություն

Շախմատ խաղալով՝ զարգացնում ես վերլուծական մտածողությունը: Եվ դա միայն ձեր քայլերի միջոցով մտածելը չէ: Արտաքին հայացքն այն է, ինչն այդքան հաճախ պակասում է մարդուն:

Մենք շատ հաճախ սուբյեկտիվորեն գնահատում ենք այս կամ այն հարցը: Եվ ուսումնասիրելով հակառակորդի մարտավարությունը՝ փորձելով թափանցել նրա տրամաբանությունը եւ գաղափարներ, դուք կզարգացնեք օբյեկտիվ վերլուծական մտածողություն, որը, անշուշտ, շատ օգտակար կլինի կյանքում:

Հաղթող մտածելակերպը

Զարմանալիորեն, հաղթողի պես մտածելու ունակությունը առաջնային նշանակություն ունի գործունեության ցանկացած ոլորտում: Ձեր նպատակին հաջողությամբ հասնելու համար հաղթանակին հավատալը պարզապես կենսական նշանակություն ունի: Դժվար է պատկերացնել զարգացած մարդու, ով չի հավատում ինքն իրեն: Հաղթողի մտավոր վերաբերմունքը մարզված է, ինչպես ցանկացած այլ ինտելեկտուալ որակ, դրա համար իդեալական գործիք է շախմատը:

Կորցնելու ունակություն

Առաջին հայացքից կարող է թվալ, որ այս հայտարարությունը հակասում է նախորդին: Իրականում ոչ: Կորցնելու ունակությունը նույնպես զարգացած անհատականության չափազանց կարևոր հատկություն է: Պարտությունները, ինչպես հաղթանակները, զարմանալի ձևերով են ազդում մեզ վրա: Մենք

եզրակացություններ ենք անում, որոնց մասին նախկինում չենք մտածել, մեր մեջ աճեցնում ենք տոկունություն՝ չհանձնվելու համար:

Մինչ օրս հետազոտողների կողմից իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց միջոցով փորձ է արվել պարզել շախմատի ունեցած ազդեցությունը երեխաների վարքի վրա, այսինքն՝ թե ինչպես է շախմատն ազդում երերխայի վարքի և կամային որակների վրա, իսկ հետազոտության մյուս մասը վերաբերում է շախմատի՝ ԿԱՊԱԿՈՒ երեխաների խոսքի և մյուս հոգեկան գործընթացների վրա ունեցած ազդեցությանը: Հետազոտության թիրախային խումբ հանդիսացել են հիմնականում մտավոր զարգացման խանգարում, աուտիզմ և հիպերակտիվություն ունեցող երեխաները: Կատարված հետազոտությունների արդյունքների ավելի ճշգրիտ վերլուծություն կարելի է անել հետազոտությունների՝ տարիներ տևող շարունակական իրականացման դեպքում և, հաշվի առնելով այս հանգամանքը, առավել ստույգ տվյալներ ստանալու համար հետազոտությունների իրականացման նախնական փուլում ընտրվել են զարգացման համեմատաբար թեթև խնդիրներ ունեցող երեխաներ, որպեսզի հնարավոր լինի կարճ ժամանակում տեսանելի դարձնել շախմատի ուսուցման ազդեցությունը նրանց վրա: Բնականաբար, եթե որպես հետազոտման թիրախային խումբ ընտրվեն մտավոր զարգացման լուրջ խնդիրներ ունեցող երեխաները, ապա նման հետազոտությունը, իհարկե, կպահանջի ավելի երկար ժամանակ:

Շախմատի՝ որպես խաղի ունեցած համագործակցային բնույթը շատ կարևոր է բնականոն զարգացում ունեցող երեխաների համար նույնպես: Բայց, եթե նրանց համար դրա նշանակությունը կայանում է խաղի իրականացման մեջ, ապա ԿԱՊԿՈՒ երեխաների դեպքում շախմատի առաջնային գործառույթն է երեխայի՝ իր հասակակիցների հետ շփման ապահովումը, նրանց ներկայության, մասնակցության և նրանց հետ միջանձնային հարաբերություններ հաստատելու կարողությունը: Շախմատը հանդիսանում է լավագույն միջոցը այս գործընթացների արդյունավետ կազմակերպման համար: Օրինակ, ինչպես քաջ հայտնի է, աուտիզմ ունեցող երեխաներն ունեն շփման և հաղորդակցման խանգարումներ, և դրա արդյունքում վերջինները սոցիալական միջավայրից մեկուսացած են՝ լինի դա տանը, փողոցում, թե դպրոցում: Հատուկ մանկավարժության և լոգոպեդիայի մեջ կիրառվող այլ մեթոդներին զուգահեռ՝ շախմատը ևս լավ միջոց է՝ այս երեխաներին իրենց մեկուսացած վիճակից հանելու և նրանց սոցիալիզացիան արդյունավետ կազմակերպելու համար:

Շախմատ խաղը տարրական դպրոցում ունի կրթական մեծ ներուժ, որը պայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով՝

● Շախմատը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը:

● Շախմատում զարգանում և կատարելագործվում են սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները, նպաստելով ուսումնական մյուս առարկաների ուսումնասիրմանը:

● Շախմատում դրսևորվում է նպատակին հասնելու համար հետևողական և քրտնաջան աշխատանքի անհրաժեշտությունը, որը նպաստում է աշակերտի հոգևոր աշխարհի ձևավորմանը:

● Շախմատը նպաստում է նաև աշակերտի ինքնադրսևորմանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը:

● Շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ:

● Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է աշակերտի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ:

● Արվեստի առումով այն զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Փորձարարական աշխատանքի իրականացման ընթացքը, արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը

Հետազոտական աշխատանքի շրջանակներում, մեր առջև դրված նպատակի և խնդիրների լուծման համար մշակել ենք նաև հարցաթերթիկներ ուղղված ուսուցիչներին և աշակերտներին :

Ուսուցիչներին ուղղված մեր հարցաթերթիկի նպատակն էր պարզել թե ինչպե՞ս են անդրադառնում կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների վրա խաղ-դասերը:

Դիագրամ 1.



Հարցաթերթիկի պատասխանների արդյունքները ցույց տվեցին, որ ուսուցիչները մեծ մասամբ պնդում էին, որ հիմնականում միջանձնային հարաբերությունների ձևավորման հիմքերը դրվում են առաջին և երկրորդ դասարաններում, որտեղ ավելի ինտենսիվ են իրականացվում ուսումնաճանաչողական, դիդակտիկ խաղերը, քանի որ խաղի միջոցով երեխան ավելի ազատ է կարողանում արտահայտել իր մտքերը, ավելի ազատ է լինում շփման մեջ, սովորում է լսել դիմացինին, հարգել ընկերոջը : Նրանցից շատերը կարևորում էին, երրորդ, չորրորդ դասարաններում խաղ-առաջադրանքների, սյուժետադերային, շարժողական և այլ խաղերի կիրառումը ինչպես կրտսեր դպրոցականների գիտելիքների յուրացման, բազմաբնույթ մտածողության զարգացման, այնպես էլ հանդուրժողականության, համագործակցության կարողությունների և միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում:

Աշակերտներին ուղղված հարցաթերթիկները, տրվել են երկրորդ և չորրորդ դասարանների աշակերտներին այն նպատակով, որ՝ բացահայտեինք խաղերի կիրառման նշանակությունն ու դերը կոնկրետ այդ դասարաններում կրտսեր դպրոցականների համագործակցային կարողությունների և միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում (հարցաթերթիկ 2)։

Հարցաթերթիկների արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ երկրորդ դասարաններում առաջին հարցին՝ դպրոցում ընկերներ շա՞տ ունես, <<այո>> պատասխանել են 38 աշակերտ, <<ոչ>> պատասխանել է 4-ը։

Դիագրամ 1. 

Երկրորդ հարցին՝ սիրու՞մ ես նրանց հետ խաղալ, <<այո>> պատասխանել են 40 , աշակերտ , <<ոչ>> պատասխանել է 2-ը։

Դիագրամ 2



Երրորդ հարցին՝ ե՞րբ ես զգում ընկերոջ օգնության կարիքը, պատասխանները բաժանվել են հետևյալ կերպ՝

ա) Ուսուցչի հանձնարարությունը կատարելիս - 16 աշակերտ

բ) Դասին իրականացվող խաղերի ժամանակ-18 աշակերտ

գ) Դասամիջոցին -8 աշակերտ

Դիագրամ 3



Չորրորդ հարցին՝ խաղ-դասերի ժամանակ օգնու՞մ ես ընկերոջդ, <<այո >> պատասխանել են 37 աշակերտ , <<ոչ>> 5-ը:

Դիագրամ 4



Հինգերորդ հարցին՝ ո՞ր աշխատանքներն ես առավել շատ նախընտրում:

ա) զույգերով - 35 աշակերտ

բ) անհատական – 7 աշակերտ

Դիագրամ 5



Կարծում եմ, ուսուցման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար մեծ դեր է խաղում երեխաների միջև միջանձնային փոխհարաբերությունները, նրանց միջև ընկերական շփումը:

Իրականացրինք զրույց աշակերտների հետ.

1.Ունե՞ք արդյոք մտերիմ ընկերներ։

Այո-28 աշակերտ 80 %

Ոչ - 7 աշակերտ 20 %

2.Դպրոցից դուրս շփվու՞մ եք ձեր համադասարանցիների հետ:

Այո – 24 աշակերտ 68 %

Ոչ բոլորի հետ – 9 աշակերտ 26 %

Չի շփվում – 2 աշակերտ 9 %

Դիագրամ 6



Մեր կարծիքով, եթե երկրորդ դասարանի աշակերտները հաճախ շփվեն թե՛ դպրոցում, թե՛ դպրոցից դուրս, ավելի արագ կհարմարվեն դպրոցական կյանքին ու նոր միջավայրին։

3.Արդյոք որևէ բան խանգարու՞մ է ձեզ, դասարանում հարմարվելուն։

Այո-12 աշակերտ

Ոչ -23 աշակերտ



Տրամագիր 7

Ստացված արդյունքների առավել մանրամասն ուսումնասիրության և հարակից հարցերից պարզ դարձավ, որ ճիշտ է երեխաները մեծամասամբ հաճույքով են հաճախում դպրոց, սակայն, այնուամենայնիվ, նրանց հարմարմանը խանգարող հանգամանքներ կան՝ դպրոցում նրանք ծանրաբեռնվում են դասերով, նրանց անընդհատ հանձնարարություններ և դասեր են տալիս և նրանց խաղալու համար ժամանակ չի մնում, այսինքն՝ չնայած, որ այդ տարիքում երեխաների առաջատար գործունեությունը ուսումնական գործունեությունն է, միևնույն է նրանք դեռ ուզում են խաղալ: Նրանց ուշադրությունը դեռ ունակ չէ երկար ժամական կենտրոնանալ մի գործողության վրա, այդ պատճառով նրանք շուտ են հոգնում և երեխաներից ոմանց համար հենց դասերին դժվար կենտրոնանալն ու շուտ հոգնելն է խանգարում արագ և հեշտ հարմարվել դպրոցում: Պարզեցինք նաև, որ երեխաների հարմարման համար խնդիր են առաջացնում դպրոցական պայմանները՝ փոքր, ցուրտ կամ ոչ լուսավոր դասասենյակները, ծանր դասագրքերը, անհարմար նստատեղերը կամ այն տեղը, որտեղ նստում է երեխան, երբ գրատախտակը նրա համար շատ հեռու է և տեսանելի չէ: Արդյունքների վերլուծության միջոցով պարզեցինք նաև, որ երեխաների հարմարմանը խանգարում է իրենց խառնվածքը՝ շատ ամաչկոտ լինելու պատճառով նրանք դժվար են հարմարվում նոր դասարանին, դասընկերներին և նոր ուսուցչուհուն ու արդյունքում տուժում է նաև ուսումնական գործընթացը: Երեխաների մի մասի համար էլ հարմարմանը խանգարող գործոններ էին դասի ժամանակ եղած աղմուկը և դասընկերների հետ ունեցած բացասական փոխհարաբերությունները:

Չորրորդ դասարաններում հարցաթերթիկի պատասխանների վերլուծությունը ցույց տվեց հետևյալ արդյունքները առաջին հարցին՝ դպրոցում ընկերներ շա՞տ ունես, <<այո>> պատասխանել են 36 աշակերտ, <<ոչ>> պատասխանել է 2-ը:

Դիագրամ 8



Երկրորդ հարցին՝ սիրու՞մ ես նրանց հետ խաղալ, <<այո>> պատասխանել են 38 աշակերտ, <<ոչ>> պատասխան չի եղել:

Դիագրամ 9



Երրորդ հարցին՝ ե՞րբ ես զգում ընկերոջ օգնության կարիքը, պատասխանները բաժանվել են հետևյալ կերպ՝

ա) Ուսուցչի հանձնարարությունը կատարելիս - 14 աշակերտ

բ) Դասին իրականացվող խաղերի ժամանակ: -20 աշակերտ

գ) Դասամիջոցին - 4 աշակերտ

Դիագրամ 10



Չորրորդ հարցին՝ խաղ-դասերի ժամանակ օգնու՞մ ես ընկերոջդ, <<այո >> պատասխանել են 35 աշակերտ, <<ոչ>> 3-ը:



Հինգերորդ հարցին՝ ո՞ր աշխատանքներն ես առավել շատ նախընտրում:

ա) զույգերով - 30 աշակերտ

բ) անհատական - 5 աշակերտ

գ) և՛ զույգերով, և՛ անհատական - 3 աշակերտ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի շրջանակում կատարած ուսումնասիրությունների ընթացքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման վերաբերյալ վերլուծությունը թույլ տվեց եզրակացնել, որ կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները համարվում է միջանձնային հարաբերությունների ձևավորման վրա ազդող կարևոր գործոն, ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ոչ միայն լավ իմանա սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, այլև հաշվառ դրանք սովորողների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործընթացում։

2. Խաղը տարրական դպրոցի ուսումնական գործընթացի անբաժանելի բաղադրիչն է, կրտսեր դպրոցականների գորրծունեության տեսակ, որը խթանում է սովորողների հետաքրքրությունների շրջանակը, ակտիվացնում աշակերտներին, զարգացնում է մտածողությունը, երևակայությունը, խոսքը, ստեղծագործականությունը և հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականին ուսումնական գործընթացի սուբյեկտ լինել։ Աշակերտները նախընտրում են սովորել խաղի միջոցով, քանի որ դասն ավելի դյուրին և հետաքրքիր է անցնում։

3. Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործընթացի վրա էական ազդեցություն են ունենում խաղերը, մասնավորապես՝ խաղ-դասերը, սյուժետադերային խաղերը, առանձին խաղ-մրցույթները և խաղ-առաջադրանքները, որոնք նպաստում են հոգեկան գործընթացների, համագործակցային կարողությունների, բարոյակամային որակների, ստեղծագործական ունակությունների զարգացմանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ս. Սահակյան Ա.Ս. Մանկավարժություն, Երևան, Մանկավարժ, 2005:
2. Ասատրյան Զ. Ա., Տարրական կրթության մանկավարժություն, Երևան, 2017:
3. Ասատրյան Լ. Թ. և ուրիշներ,Մանկավարժություն, Երևան, 2017:.
4. Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ն. Զ.,«Ես և շրջակա աշխարհը ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա», Ուսումնամեթոդական ուղեցույց, Երևան 2016թ.
5. Գյուլամիրյան Ջ.<<Խաղալով սովորենք>> Երևան Զանգակ -97 2009թ.
6. Թորոսյան Կ., ԽաչատրյանՀ. <<Վեց տարեկանների մեկնարկը>> Երևան 2006թ.
7. Թունյան Ջ. Ե., Երիցյան Լ.Մ., Կրտսեր դպրոցականի հոգեբանություն:
8. Կանցյան Լ., Խաղը լուրջ զբաղմունք է, Երևան, 1970:
9. Հակոբյան Գ., Էթնոմանկավարժություն, Ուսումնական ուղեցույց, Երևան, 2015:
10. Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ., Տողանյան Ն., Ավագյան Լ., <<Ես և շրջակա աշխարհը>> 4, Երևան, 2015